ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 հոկտեմբերի 2015 թվականի N 1182-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ, ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՈՒ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 413-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը*որոշում է.*

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք ապահովվում են մանկական սնունդով, և նրանց երեխայի խնամքի համար տրամադրվում է հագուստ, կոշկեղեն ու փափուկ գույք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշմամբ սահմանված չափաբաժիններով և ժամկետներով՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 9 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» N 413-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Աբրահամյան

2015 թ. հոկտեմբերի 16

Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը
1.	Հաց	գրամ	650
2.	Ձավարեղեն	գրամ	120

3.	Մակարոնեղեն	գրամ	30
4.	Միս, մսամթերք (միս՝ ոսկորով)	գրամ	90 (180)
5.	Կաթ (կաթի փոշի)	գրամ	100 (14.3)
6.	Ձուկ (առանց գլխի)	գրամ	100
7.	Կենդանական յուղ, մարգարին	գրամ	45
8.	Շաքար, շաքարավազ	գրամ	40
9.	Կերակրի աղ	գրամ	20
10.	Թեյ (թեյաբույսեր)	գրամ	2
11.	Տոմատի մածուկ	գրամ	5
12.	Դափնետերև	գրամ	0.1
13.	Կարտոֆիլ	գրամ	550
14.	Այլ բանջարեղեն	գրամ	250
15.	Հյութեր	գրամ	100
16.	Պանիր	գրամ	25
17.	Միրգ	գրամ	200
18.	Բուսական յուղ	գրամ	25
	Չորս և ավելի ժամ տևողությամբ փոխադրման դեպքում կալանավորված անձին կամ դատապարտյալին տրվող սննդի չափաբաժինները		
1.	Հաց	գրամ	1000
2.	Մսի պահածո (կամ ձկան պահածո)	գրամ	200 (300)
3.	Մրգահյութ	գրամ	200
4.	Պանիր	գրամ	40
	Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող հավելյալ սննդի չափաբաժինները		
1.	Բուսական յուղ	գրամ	20
2.	Կարագ	գրամ	25
3.	Կաթ (կաթի փոշի)	գրամ	100 (14.3)
4.	Հավի ձու	հատ	1

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015
թվականի
հոկտեմբերի 15-ի N 1182-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Շահագործման ժամկետը(տարի)
1.	Տղամարդու բամբակյա կոստյում	լրակազմ	2	1
2.	Տղամարդու բանվորական կոստյում	լրակազմ	1	1
3.	Տղամարդու բամբակյա վերնաշապիկ	հատ	2	1
4.	Տղամարդու ներքնազգեստ	լրակազմ	2	2
5.	Տղամարդու բամբակյա շապիկ	հատ	4	1
6.	Տղամարդու վարտիք	հատ	4	1
7.	Անդրավարտիքի գոտի	հատ	1	2
8.	Տղամարդու կաշվե կիսաճտքավոր կոշիկ	զույգ	1	2

9.	Տղամարդու կոշիկ	զույգ	1	1
10.	Տղամարդու բամբակյա կիսագուլպա	զույգ	6	1
11.	Բամբակյա անդրավարտիք	հատ	1	1
12.	Բամբակյա գլխաշոր՝ գործվածքից	հատ	2	2
13.	Կնոջ բաճկոն՝ աստառապատ	հատ	1	2
14.	Բամբակյա զգեստ-կոստյում	լրակազմ	1	1
15.	Զգեստ՝ բամբակյա գործվածքից	հատ	1	1
16.	Կնոջ վերնաշապիկ՝ բամբակյա գործվածքից	հատ	2	1
17.	Բամբակյա խալաթ	հատ	1	1
18.	Կնոջ շապիկ	հատ	4	1
19.	Կրծկալ	հատ	4	1
20.	Կնոջ վարտիք	հատ	6	1
21.	Կնոջ բամբակյա կիսագուլպա	զույգ	2	1
22.	Բամբակյա գուլպա (զուգագուլպա)	զույգ	4	1
23.	Կնոջ կաշվե կիսաճտքավոր կոշիկ	զույգ	1	2
24.	Կնոջ կոշիկ	զույգ	2	1
25.	Ձմեռային գլխարկ	հատ	1	2
26.	Ամառային գլխարկ	հատ	1	1
27.	Կիսաբրդյա ձեռնոց	զույգ	1	1
28.	Բամբակյա շարֆ	հատ	1	2
29.	Բամբակյա կիսավերարկու	հատ	1	2
30.	Հողաթափիկ, մաշիկ	զույգ	1	1

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Դ. Հարությունյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՈՒ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Շահագործման ժամկետը
	Անկողնային պարագաներ			
1.	Ծածկոց	հատ	1	2 տարի
2.	Ներքնակ	հատ	1	2 տարի
3.	Բարձ	հատ	1	2 տարի
4.	Սավան	հատ	4	1 տարի
5.	Բարձի երես	հատ	2	1 տարի
6.	Երեսսրբիչ	հատ	4	1 տարի
7.	Հիգիենիկ սրբիչ	հատ	2	1 տարի
	Հիգիենիկ պարագաներ			
1.	Օճառ՝ տնտեսական	գրամ	200	ամսական
2.	Օճառ՝ ձեռքի	գրամ	100	ամսական
3.	Լվացքի փոշի (1 կգ լվացքի հաշվարկով)	գրամ	40	ամսական
4.	Սպասք լվանալու նյութեր	գրամ	30	ամսական
5.	Ատամի մածուկ	գրամ	50	ամսական
6.	Ատամի խոզանակ	հատ	1	1 տարի
7.	Զուգարանի թուղթ	հատ	1	ամսական
8.	Մեկանգամյա օգտագործման սափրող սարք	հատ	3	ամսական
9.	Կանացի հիգիենայի միջոցներ	հատ	10	ամսական

	Իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց համար հիգիենիկ պարագաներ			
1.	Մանկական օճառ	գրամ	200	ամսական
2.	Լվացքի փոշի	գրամ	1000	ամսական
3.	Մանկական տակդիր	հատ	4	1 օր
4.	Մանկական կերակրաշիշ	հատ	2	6 ամիս
5.	Մանկական հիգիենիկ խոնավ անձեռոցիկ	հատ	2	ամսական
6.	Ծծակ	հատ	2	1 տարի
7.	Մանկական տաշտ	հատ	1	3 տարի

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան